

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԸ ՀԱՅ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ.01.01-«ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Սաֆարյան Վազգեն Հմայակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր
Դերիկյան Վարդան Գևորգի
բանասիրական գիտությունների

թեկնածու

Առաքելյան Անի Խոսքովի

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան
հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հուլիսի 7-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտություն 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ալբերտ Մակարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը ներառում է V-XVIII դարերի հայ միջնադարյան քնարերգության տպագրված տեքստերի հեղինակային կանոնընկալման ուսումնասիրությունը: Ատենախոսության գլուխների բաժանումը կատարված է հեղինակային հայեցակարգն ընդգծող բաղադրիչների առանձնացման սկզբունքով: Ներկայացված են օրհներգերի, գանձարանային միավորների, տաղերի, բանքերի, կաֆաների, հայրենների, ուշմիջնադարյան տաղերի, բանաստեղծությունների հեղինակային ընկալումները կանոնականի և անհատականի հարաբերակցության տեսանկյունից: Միջնադարյան քնարերգության բովանդակային լայն շերտերից ներկայացվում է մեկը՝ սուրբգրային կանոնի ներկայացման ուսուցողական, խրատական շերտը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի հիմքում դրված է խնդիր, որն արդի միջնադարագիտությանը զբաղեցնող հիմնական հարցերից մեկն է, սակայն միջնադարյան քնարերգության բոլոր փուլերի ընդգրկմամբ դեռևս չի մասնավորվել: Թեմայի շրջանակում փորձ է արվել առանձին դիտարկել միջնադարյան քնարերգուի անհատական-ստեղծագործական և օբյեկտիվ վերաբերմունքը: Ներկայացվել է ուշմիջնադարյան քնարերգուների՝ սուրբգրային կանոնի «ժառանգորդ» և փոխանցող լինելու հանգամանքը, որը ևս առանձին քննության չի ենթարկվել: Թեմայի արդիականությունը պայմանավորված է առանձնացված խնդիրների քննության, հեղինակային հայեցակարգի համակարգային՝ բաղադրիչ-մոդուլների առանձնացմամբ քննելու փորձով:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ ցույց տալ V-XVIII դդ. հայ միջնադարյան քնարերգության սուրբգրային կանոնի ներկայացման, վերլուծության հեղինակային դիրքորոշումը, սուրբգրային կանոնի գեղարվեստական մեկնության առանձնահատկությունը, որի իրագործման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել վաղմիջնադարյան օրհներգուների դերն՝ իբրև ավետարանական կանոնը նկարագրող և փոխանցող:
2. Արտացոլել սուրբգրային կանոնը ներկայացնելու հեղինակային դիրքորոշումը հայ միջնադարյան կաֆաներում, և ցույց տալ հեղինակ-ուսուցանող հարաբերակցությունը խրատական կաֆաների դեպքում:

3. Պարզաբանել հեղինակային հայեցակարգը ձևավորող հիմնական մոդուլ-բաղադրիչների՝ կրկնության պոետիկայի, «հեղինակային դիմադրության» երևույթի, խորհրդանշանների կանոնական ընկալում-վերահիմնաստավորումների դրսևորումները ուշմիջնադարյան քնարերգության մեջ:

4. Ցույց տալ սուրբգրային խորհրդանշանների զարգացումը վաղմիջնադարյան օրհներգերում, ուշմիջնադարյան բանաստեղծություններում, ինչպես նաև՝ հեղինակային նշանընտրության դրսևորումները և հեղինակային վերաբերմունքը սուրբգրային խորհրդանշանը անխախտ պահպանմամբ փոխանցելիս:

5. Ուսումնասիրել ժամանակի կրոնափիլիսոփայական մեկնական երկերի ազդեցությունը քնարերգության մեջ, և պարզաբանել մեկնական երկերի կանոնընկալման արտացոլումները ուսուցողական պոեզիայում:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հայ միջնադարյան քնարերգության ուսումնասիրությունը մշտապես եղել է հայ գրականագիտության դիտակետում: Ընդհանուր առմամբ թեմային վերաբերող խնդիրները ներկայացվել են առանձին ուսումնասիրություններում, մենագրություններում, գիտական հոդվածներում: Աշխատանքի ուսումնասիրության համար մեծապես օգտվել ենք հետևյալ աղբյուրներից.

1. Շարակնոցային միավորների ժանրաբովանդակային ընդգրկումները, ազդեցությունները և ստեղծման նպատակները քննվում են Գ. Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց» ուսումնասիրության մեջ¹: Օրհներգերի և գանձարանային միավոր հոգևոր տաղերի հեղինակային պատկանելության, հեղինակային ես-ի, սուրբգրային կանոնի մեկնության առանձնահատկությունները ներկայացված են Ն. Թահմիզյանի և Հ. Բախչինյանի ուսումնասիրություններում²: Շարականների ժանրային առանձնահատկությունները ներկայացված են Գ. Հակոբյանի

¹ Տե՛ս Գաբրիել Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց որք պաշտին 'ի հասարակաց ժամակարգութեան հայաստանեայց եկեղեցոյ, 'ի Վենետիկ,'ի վասն Սրբոյն Ղազարու, 1814:

² Տե՛ս Թահմիզյան Ն., «Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը», «Էջմիածին», 1979, թիվ 2: Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1982: Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը. 5-6-րդ դարեր, Երևան, 1985: Բախչինյան Հ., Շարականի գրապատմական ուղին (5-14-րդ դարեր), Երևան, 2012: Հայ միջնադարյան բանաստեղծությունը. Մինչև Շնորհալի և հետո (11-12-րդ դդ.), Երևան, 2022, Հ. Բ:

«Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.)» ուսումնասիրության մեջ³, ինչպես նաև՝ «Մատենագիրք Հայոց»-ի ԺԳ հատորում ներառված «Շարական» գրքի առաջաբանում՝ Վ. Դևրիկյանի հեղինակությամբ⁴: Հայ միջնադարյան օրհներգության ստեղծման նպատակային բնույթի, կրոնական-եկեղեցական դերի վերաբերյալ կարևորագույն աշխատություններ են Գ. Սարգիսյանի «Հայ եկեղեցու աստուածաբանությունը ըստ հայ շարականների» ուսումնասիրությունը⁵, իսկ հայ օրհներգության ստեղծման, առնչությունների, ազդեցությունների վերաբերյալ՝ Գ. Վինկլերի, Մ. Ֆինմերի ուսումնասիրությունները⁶:

2. Հայ միջնադարյան կաֆաների հեղինակային պատկանելության, ժանրային առանձնահատկությունների, հեղինակային դիրքորոշման ուսումնասիրության համար կարևորագույն դեր ունեն հետևյալ ուսումնասիրությունները.

Հ. Տաշյանի գրքում ներկայացվում են կաֆաներ, որոնք առաջին անգամ տպագրում է հեղինակը⁷: Կաֆաների ձեռագրային տարբերակների ուսումնասիրության և առաջին տպագրության առումով ուշագրավ են Արշակ Զոպանյանի հրատարակած կաֆաները, ինչպես և Գ. Հովսեփյանի դիտարկումները՝ թեման ներկայացնող հոդվածներում⁸: Կաֆաների քննությամբ զբաղվող հայ առաջին ուսումնասիրողներից է Հ. Սիմոնյանը⁹: Ֆրիկի՝ կաֆայագիր հեղինակ համարվելու փաստը երկբայելի է

³ Տե՛ս Հակոբյան Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980:

⁴ Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Գանձարան, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2008:

⁵ Տե՛ս Սարգիսեան Գ., կաթողիկոս ամենայն հայոց, Հայ եկեղեցու աստուածաբանությունը ըստ հայ շարականների, Կրոնական, Աստուածաբանական Եւ Հայագիտական երկեր (Հայերէն Շարք, Ա. Հատոր), Անթիլիաս, 2003:

⁶ Տե՛ս Winkler G., Das armenische Initiationsrituale. Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10. Jahrhunderts, Roma, 1982. Zimmer M., Versuch über die Impression der Gleichzeitigkeit innerhalb einer Zeitspanne im Hymnarium Sharaknots der Armenischen Apostolischen Kirche, Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie (Dr. phil.) vorgelegt der Philosophischen Fakultät der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Fachbereich Kunst-, Orient- und Alttertumswissenschaften, Gutachterinnen/Gutachter: Prof. Dr. Walter Beltz/ PD Dr. Armenuhi Drost-Abgarjan, Prof. Dr. Jürgen Tubach Tag der Verteidigung: 10.07.2006.

⁷ Տե՛ս Տաշեան Յ., Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892:

⁸ Տե՛ս Զօպանեան Ա., Հայ էջեր, Փարիզ, 1912: Հովսեփյան Գ., Հովասափ Սեբաստացի, «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, ԾԱ տարի, Ապրիլ-դեկտ., համ. Դ-ԺԲ, Գրիգորիս Աղթամարցի (Գրական-կենսագրական նոր նիւթերով), «Արարատ», ԾԲ տարի, Յունուար-դեկտեմբեր, Էջմիածին, 1919:

⁹ Տե՛ս Սիմոնյան Հ., Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975:

գրականագիտության մեջ: Խնդրին անդրադարձել են Ա. Հովհաննիսյանը, Բ. Չուգասյանը, Հ. Բախչինյանը, Հ. Սիմոնյանը¹⁰: Հայրենների, առհասարակ, հայ միջնադարյան քնարերգության և բանահյուսական ժառանգության ազդեցությունների և առնչությունների վերաբերյալ կարևորագույն ուսումնասիրություն է Ա. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր»-ը¹¹:

Միջնադարյան գրականության պարբերացման, կիլիկյան շրջանի քնարերգության, Վերածննդի գրականության հանրագիտակ հեղինակների ստեղծագործական առանձնահատկությունների, կանոնի և հեղինակի սուբյեկտիվ ընկալումների վերաբերյալ տեսական աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Վ. Սաֆարյանի ուսումնասիրությունները¹²:

3. Սուրբգրային խորհրդանշաններին և դրանց հեղինակային մեկնություններին, կիրառություններին վերաբերող տեսական կարևորագույն աղբյուրներ են Վ. Դերիկյանի ուսումնասիրությունները¹³, իսկ սուրբգրային խորհրդանշանների, կրոնափիլիսոփայական մեկնությունների դրսևորումները ներկայացնելիս հենքային են Հ. Քյոսեյանի ուսումնասիրությունները¹⁴:

Գրիգոր Նարեկացու հոգևոր տաղերի խորհրդաբանության, փիլիսոփայական, կրոնափիլիսոփայական, սուրբգրային կանոնի մեկնության վերաբերյալ առանցքային կարևորություն ունեն Պ.

¹⁰ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», Երևան, 1955: Չուգասյան Բ., Ֆրիկը պարսկերեն քառյակի թարգմանիչ, «Բանբեր մատենադարանի», Երևան, 1958, N 4: Բախչինյան Հ., Ֆրիկի բանաստեղծական ժառանգությունը, Երևան, 2021: Սիմոնյան Հ., Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975:

¹¹ Տե՛ս Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956:

¹² Տե՛ս Սաֆարյան Վ., Կիլիկյան Հայաստանի գրականությունը, ԺԱ դարի վերջ-ԺԳ դարի սկիզբ, Եր., 1990: Միջնադարի հայ գրականության պարբերացման հիմունքները, Երևան, 2012: Հայ միջնադարյան գրականություն, Երևան, 2016:

¹³ Տե՛ս Դերիկյան Վ., Ղևնդ Ալիշանը և հայ հին գրականությունը, Երևան, 1996, Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը, Երևան, 2006: Հայոց միջնադարի ազատագրական լեգենդը. մաս երկրորդ: Ներսես Մեծի մարգարեական կանխասացությունը և այլ տեսիլներ, «ՎԷՄ», Երևան, 2011, Գ(Թ) տարի, թիվ 1 (33), հունվար-մարտ: Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն, Երևան, 2013:

¹⁴ Տե՛ս Քյոսեյան Հ., Հայ միջնադարյան արվեստի կրոնափիլիսոփայական տեսությունը (V-XII) դդ., Ատենախոսություն, Երևան, 2009, Նույնի գրքային տարբերակը՝ Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն, Երևան, 2021: Աստվածաշնչի մեկնությունը Ա-Ե դարերում, Երևան, 2018:

հաշատրյանի, Հ. Թամրազյանի, Հ. Բախչինյանի ուսումնասիրությունները¹⁵:

Թեմայի շրջանակներում առանձնացված խնդիրներին անդրադառնալիս հիմնական աղբյուրներ են հանդիսացել Մանուկ Աբեղյանի ուսումնասիրությունները¹⁶:

Միջնադարյան քնարերգության ուսումնասիրման մեթոդաբանությանը, հեղինակային հայեցակարգի բաղադրիչների քննությանը վերաբերող տեսական կարևոր աղբյուրներ են Հ. Բրինկմանի, Փ. Դինցելբախերի, Ֆ. Նոյմանի, Ռ. Շնեյլի, Ս. Ժիրարի ուսումնասիրությունները¹⁷:

Աշխատանքի **գիտական նորույթն** ուսուցողական պոեզիայի տիպաբանական դրույթների կիրառմամբ հեղինակային հայեցակարգի ձևավորումը և այն բնութագրող-մասնավորող բաղադրիչների համակարգումն է: Աշխատանքում արտացոլվել է հայ միջնադարյան քնարերգության համակարգային բնույթը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության թեմատիկ ընդգրկումը հնարավորություն է տալիս միջնադարյան չափաժողով տեքստի հեղինակային անհատական-ստեղծագործական և կանոնական մեկնությունների վերլուծական միտքը ուսումնասիրել նշանագիտական, միջնադարյան հերմենևտիկայի, զուգադրական-համեմատական մեթոդներով: Հեղինակային կանոնընկալմամբ ձևավորված հայեցակարգային առանձնահատկությունները դիտարկվել են հատկապես միջնադարյան

¹⁵ Տե՛ս Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969: Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Էջմիածին, 1996: Թամրազյան Հ., Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Երևան, 2004: Բախչինեան Հ., Գրիգոր Նարեկացու Գանձարանը. վերլուծություն եւ քննություն, Լիբանան, 2016: Հայ միջնադարյան բանաստեղծությունը. Ոսկեդարից մինչև Նարեկացի (5-10-րդ դդ.), Երևան, 2021, Հ. Ա:

¹⁶ Տե՛ս Աբեղյան Մ., Ուրուագծեր հայոց գրականության պատմությունից, «Արարատ», ԽՂ տարի, Էջմիածին, 1912, № Թ: Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, Պեյրուֆ, 1959: Երկեր, Հ. Գ, Երևան, 1968: Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, ԺԱ.- ԺԹ. դարի 30-ական թուական, Անթիլիաս-Լիբանան, 2004:

¹⁷ Տե՛ս Brinkmann H., Mittelalterliche Hermeneutik, Tübingen, 1980. Dinzelsbacher P., Vision und Visionsliteratur im Mittelalter. Monographien zur Geschichte des Mittelalters, Bd. 23, Stuttgart, 1981. Neumann F., Geschichte der altdeutschen Literatur (800-1600). Grundriß und Aufbau, Berlin, 1966. Rüdiger Sch., Haben Gefühle eine Geschichte? Aporien einer History of emotions, Teil 1, Göttingen, 2015. Girard Stephen, Alexander the Great and the Rise of Christianity, Bowdoin College, 2021.

հերմենևտիկայի միջոցով¹⁸, որով կատարվել է աշխատանքի մեթոդական մշակումը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում տպագրած յոթ հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը, մշակվածությունը, տեսական ու մեթոդական հիմքերը, աշխատանքի կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՕՐՀՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված են հայ միջնադարյան օրհներգերում սուրբգրային կանոնի արտահայտման, մեկնաբանման հեղինակային անհատական-ստեղծագործական դրսևորումները, հեղինակային ես-ի արտացոլումները շարակնոցային միավորներից «Ողորմեա»-ներում, ինչպես նաև օրհներգերի թեմատիկ ընդգրկումներում՝ պատմական տվյալ դարաշրջանի խոշորագույն ներկայացուցիչների, հեղինակային ապրումների նկարագրություններում: Կարևորվել է օրհներգի երգ-բանաստեղծություն բնույթի առանձնացումը, քանի որ չափածո փառաբանական բանաստեղծության՝ երգի միջոցով արտահայտվելը ցույց է տալիս կանոնը հավատավորին «արագ» փոխանցելու, մեկնաբանելի դարձնելու և խրատելու հեղինակի նպատակադրումը: Շեշտվել է այն հանգամանքը, որ պատմական թեմաներ արծարծող օրհներգերում զգալի են հեղինակի ապրած ժամանակի և կանոնում նկարագրվող ժամանակի յուրօրինակ ներխուժումներ, որոնցում հեղինակը, փառաբանական կերպարների օրինակներն առարկայնացնելով, փորձում է ուսուցանել

¹⁸ St'u Brinkmann H., Mittelalterliche Hermeneutik, Tübingen, 1980, S.184.

ընթերցողին: Հեղինակի «ներկայությունը» զգալի է նաև պարականոն օրհներգերում: Հայ միջնադարյան օրհներգերում հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները պայմանավորում են թե՛ սուրբգրային կանոնների մեկնությունների ընկալման և փոխանցման կերպերը, թե՛ ազգային-պատմական իրադարձությունների հանդեպ դրսևորված վերաբերմունքը, թե՛ անհատական-ստեղծագործական ես-ի հստակ շեշտադրումները: Այս առանձնահատկությունները մասնավորվել են երեք ենթակետերով՝ 1.1. «Հեղինակի խնդիրը սուրբգրային տեքստը փառաբանական օրհներգերի միջոցով արտահայտելիս», 1.2. «Հեղինակի խնդիրը ազգային-պատմական տեքստեր բովանդակող օրհներգերում», 1.3. «Հեղինակի անձնական ապրումների դրսևորումը օրհներգերում»: Առաջին ենթակետում ներկայացված են օրինակներ, որոնցում շարականների թեմատիկ ընտրությունը և սուրբգրային տեքստի մեկնաբանությունը զուգահեռվում են՝ ցույց տալով փառաբանական բնույթի տեքստերի հանդեպ հեղինակի վերաբերմունքը, օրինակ՝ Դավթի սաղմոսների ազդեցությունը մեծ է Մեսրոպ Մաշտոցի շարականներում, և միաժամանակ յուրօրինակ է հեղինակի անհատական-խոհական ուրույն մտածողության դրսևորումը դրանցում: Երկրորդ ենթակետում ներկայացվում են ազգային կյանքի իրադարձությունների փառաբանմանը նվիրված շարականներ, որոնցում պատմական նյութը քաղված է պատմագրական երկերից, սակայն այդ նյութի՝ հեղինակի մշակման առանձնահատկության և շարականի ընդունված կանոնական պատկերումը տվյալ դեպքում միահյուսվում են՝ հիմքում դնելով հեղինակի նպատակադիր գործելու խնդիրը: Երրորդ ենթակետում անդրադարձ է կատարվում ապաշխարական բնույթի օրհներգերին՝ «Ողորմես»-ներին, ինչպես նաև պարականոն համարվող գործերին, որոնցում հստակորեն արտացոլվում են հեղինակների մտավախությունները, անձնական ապրումները, տազնապները մահվան, պատժի, Ահեղ դատաստանի վերաբերյալ¹⁹:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ

Երկրորդ գլխում ներկայացված են հայ կաֆայագիրների անհատական-ստեղծագործական դիրքորոշումները սուրբգրային կանոնի ընտրության, արձակ պատմություններին զուգահեռ արտահայտելու շարժառիթները: Կաֆաների հեղինակներ և թարգմանիչներ են՝ Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին, Զաքարիա Գնունեցին, Հովասափ

¹⁹ Տե՛ս Հակոբյան Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980, էջ 79:

Սերաստացին: Կաֆաներ են ստեղծվել և թարգմանվել հետևյալ պատմությունների վերաբերյալ. 1. «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն», 2. «Պղնձե քաղաքի պատմություն», 3. «Փահլուվ թագավորի պատմություն», 4. «Մանկան և աղջկա պատմություն», 5. «Ֆարման մանկան պատմություն», 6. «Հայոց թագավորի պատմություն»: Թվարկված պատմությունների կաֆաներում, ի թիվս արձարծած շատուշատ թեմաների, հեղինակների հիմնական շեշտադրումը սուրբգրային կանոնը ներկայացնելն է: Կաֆաների արձակ պատմությունները լի են արևելյան աշխարհիկ, հեթանոսական կյանքի նկարագրություններով, հեքիաթային պատումներով, և հեղինակները դրանք զուգահեռել են ավետարանական պատմություններին՝ կանոնը ներկայացնելով խրատաբար: Ուշագրավ օրինակներ են Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաները: Առաջին ենթակետում՝ 2.1. **«Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաները»**, առանձնացվում են Ալեքսանդր Մակեդոնացու կերպարին անդրադառնալու հեղինակային շարժադիրները և Ալեքսանդր Մակեդոնացի-Քրիստոս կերպարների զուգահեռման միտումները:

Երկրորդ ենթակետում՝ 2.2. **«Հեղինակի ստեղծագործական դիրքորոշումը հայ միջնադարյան կաֆաներում»**, արտացոլված են խոհափիլիսոփայական բնույթի կաֆաների, բանահյուսական կայուն կաղապարների կիրառության հեղինակային միտումները: Շեշտվել է այն հանգամանքը, որ հեղինակային գնահատողական վերաբերմունքը գերակա է և՛ խոհափիլիսոփայական, և՛ ժողովրդական մտածողությունն արտացոլող կաֆաներում, որոնք առանձնացվել են պայմանական բաժանումներով (1. **«խոհափիլիսոփայական կաֆաներ»**, 2. **«ժողովրդական մտածողության և բանահյուսական կայուն կաղապարների կիրառությունը կաֆաներում»**): Ընդգծվել է, որ խոհափիլիսոփայական բնույթ ունեցող կաֆաներում (ինչպես՝ Պղնձե քաղաքի պատմության կաֆաները) հեղինակները ցուցաբերում են մեծ զգուշություն, քանի որ արձակ տեքստում առատ են աշխարհիկ կյանքի նկարագրությունները, և հենց այստեղ են շեշտում կանոնը պահելու կարևորությունը: Ընդգծված է ևս մեկ հեղինակային նկատառում. խրատաբար ներկայացված կանոնը ընդունելի և հասկանալի դարձնելու հանգամանքով է պայմանավորված ժողովրդական մտածողությանը հարազատ մնալու հեղինակի միտումը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ՌԵՄԻՔՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երրորդ գլխում ներկայացվել են սուրբգրային խորհրդանշանների անփոփոխ և վերաիմաստավորված կիրառությունները: Միջնադարյան

քնարերգության վաղ փուլից մինչև ուշ շրջան առկա են խորհրդանշանի գործածության հետևյալ դրսևորումները՝ սուրբգրային խորհրդանշանների նույնական կիրառություն և հեղինակային վերաիմաստավորումներ: Ուշ միջնադարում արդեն «թուլանում» է կանոնի թելադրած խորհրդանշանային ազդեցությունը: Այս գլխում զուգահեռվել են ժողովրդական մտածողությանը հարազատ խորհրդանշանային ընկալումները, դրանց ազդեցությունները քնարերգության մեջ: Տարբերակվել են չորս տարրերի փիլիսոփայական և սուրբգրային ընկալումների կիրառությունները քնարերգության մեջ: Առաջին ենթազվխում՝ **«Ստեղծագործելու շնորհի անհատական և կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ»**, տարբերակվել են «լույս» խորհրդանշանի զարգացման փոփոխությունները վաղ և ուշ շրջանի քնարերգության մեջ, մասնավորապես «Իմանալի լույսի»՝ իբրև Քրիստոսի պայծառակերպության, հայտնության, նախաստված, նախալույս ընկալման, ապա Վերածննդի շրջանում գիտության լույս, շնորհ ընկալման համանշանակումային գործածությունները:

Երկրորդ ենթազվխում՝ **«Կյանքի ու մահվան, հայտնության ու ազատության փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Սարկավազի «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարիկ» խոհափիլիսոփայական պոեմում»**, առանձնացվել են Վերածննդի հանրագիտակ հեղինակ Հովհաննես Սարկավազի՝ «հայտնություն-շնորհ-լույս» խորհրդանշանային նոր ընկալման դրսևորումները, որոնք գործուն դարձան նաև հետագա շրջանի քնարերգության մեջ: Տարբերակված են հեղինակի դիրքորոշումները մեղքի, հատուցման, ազատության, կամքի փիլիսոփայական հարցադրումների և խորհրդանշանային մեկնությունների վերաբերյալ:

Երրորդ ենթազվխում՝ **«Վարդի և սոխակի խորհրդանշանային ընկալումները ուշմիջնադարյան քնարերգության մեջ»**, դիտարկվել են «վարդի ու սոխակի» խորհրդանշանների կիրառությունները տաղերում, գանձարանային միավորներում՝ իբրև հոգևոր սեր՝ Քրիստոս, Աստվածամայր, Սուրբ Հոգի, հոգի և մարմին, աշխարհիկ սեր, հայրենիք, կին: Վարդն իբրև հայրենիքի խորհրդանշան՝ կիրառվել է Պետրոս Ղափանցու բանաստեղծություններում²⁰: Հեղինակը տարբերակում է նաև վարդ-աշխարհիկ-մարմին, սոխակ-հոգևոր-հոգի խորհրդանշանային ընկալումները: Մասնավորվել է, որ ուշմիջնադարյան քնարերգուների ստեղծագործություններում առավելաբար շեշտվում է վարդի՝ սիրո խորհրդանշան լինելը:

²⁰ Շուշանիկ Նազարյան, Պետրոս Ղափանցի, Երևան, 1969, էջ 81:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԿՐԿԼՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ ԵՎ «ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զորրորդ գլխում ներկայացվել են հեղինակային հայեցակարգը բնութագրող բաղադրիչները՝ կրկնության պոետիկան ձևավորող բառ-կաղապարների կիրառությունները: Սուրբգրային կանոնի մեկնության տարբեր օրինակներ են ժառանգել ուշմիջնադարյան շրջանի հեղինակները, որոնցից շատերը այն կիրառել են գրողական նույնական ոճով, կանոնը կալման փոխանցման նույնական տարբերակներով: Աստվածամորը նվիրված տաղերում հեղինակները միտումնավոր կիրառում են շարականներին բնորոշ փառաբանական, օրհներգային ոճ, վաղմիջնադարյան քնարերգությանը բնորոշ կայուն բառ-կաղապարներ, որոնք գործածում են և՛ սիրելիին գովերգելիս, և՛ ժամանակի երախտավոր գործչին բնութագրելիս: Իսկ հեղինակային զուգահեռների դեպքում գործուն են թեմատիկ-ընդհանրական կրկնությունները՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանի համար ընդունելի արտահայտման կերպերով: «Շեղինակային դիմադրության» դեպքում նույն երևույթի հակադիր՝ աշխարհիկ և հոգևոր իմաստները գործածվում են միաժամանակ: Նույն ստեղծագործության մեջ քնարերգուն ցույց է տալիս տվյալ երևույթի՝ իր ժամանակի համար բնորոշ իմաստը նկատմամբ, բայց և նախնական կրոնական պատկերացումներին հարազատ մնալով՝ ի վերջո, ընդունում է հոգևոր խորհուրդը, կանոնի թելադրած իմաստը: Երկու ենթագլուխներում (4.1. «Շեղինակային ոճական, բառապատկերային կրկնությունների և թեմատիկ, նկարագրական ընդհանրությունների դրսևորումը հայ և ֆրանսիական միջնադարյան քնարերգության մեջ», 4.2. «Շեղինակային դիմադրության» երևույթը») առանձնացված են հեղինակային հայեցակարգը ձևավորող բաղադրիչները՝ հեղինակային ոճական, բառ-կաղապարների գործածություն, ինչպես նաև արտացոլված են թեմատիկ, նկարագրական ընդհանրություններ հայ և պրովանսալյան քնարերգության մեջ: Ժամանակագրական ընդգրկման առումով շեշտված են XII-XIII դարերը, քանի որ ստեղծագործական ազդեցությունների, թեմատիկ-նկարագրական անցումների միջակայքում հանդես են գալիս այնպիսի բանաստեղծներ, որոնց ստեղծագործություններում ներկայացված զաղափարական շեշտադրումները նոր ու թարմ ասելիք էին կանոնիկ Միջնադարի համար: Այս ենթագլխում մասնավորվել են երեք ենթակետեր (4.4.1. «Սիրերգության մոտիվները», 4.4.2. «Քաղաքական և սոցիալական անհավասարությունների թեման», 4.4.3. «Սուրբգրային կանոնի դրսևորումը»)՝ արտացոլելու համար տրուբադուրների ստեղծագործություններում և հայ միջնադարյան հայրեններում, տաղերում առկա թեմատիկ ընդգրկումը, նկարագրական կերպերի

ընդհանրությունները: Երկրորդ, ենթագլխում անդրադարձ է կատարվել «հեղինակային դիմադրության» երևույթին, որն արտացոլում է նույն երևույթի վերաբերյալ հեղինակի կանոնական և անհատական դիրքորոշումը՝ տվյալ ստեղծագործության մեջ համատեղելով նաև հակադիր իմաստներ:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի քննության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Միջնադարյան քնարերգության բովանդակային շերտերից մեկը սուրբգրային կանոնի խորհրդաբանության մեկնությունն է: Այդ մեկնության գեղարվեստական արտացոլումը քնարական սեռի տարբեր ժանրերի դեպքում դրսևորում է առանձնահատկություններ՝ պայմանավորված հեղինակի կանոնընկալման օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Հայ միջնադարյան քնարերգության հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները պայմանավորող գործոններից է ուսուցողական պոետիկան, որն ընդգծում է շարակնոցային միավորների, կաֆաների հեղինակային դիրքորոշումը:

2. Հայ միջնադարյան երգ-բանաստեղծությունները՝ օրհներգերը, կազմում են ուսուցողական պոետիկայի անխախտ մաս, քանի որ սուրբգրային կանոնի փառաբանական բնույթը հիմքում ուներ կանոնը մեկնող, ավետարանական ուղերձը փոխանցող գործառույթ: Հեղինակային անհատական կանոնընկալման և արտահայտման ուշագրավ օրինակներ են ապաշխարական երգերը՝ «Ողորմեա»-ները, որոնցում գերիշխող են հեղինակի ապրումների ու հույզերի, քնարական հերոսի հոգեվիճակի դրսևորումները:

3. Միջնադարյան արձակ պատմությունների հիման վրա ստեղծված չափածո խրատական կաֆաները հիմքում ունեն սուրբգրային կանոնի, ավետարանական պատգամների փոխանցման գործառույթ: Կաֆայագիր հեղինակները զուգահեռում են հեթանոսական հաղթական կերպարները և քրիստոնեական սիրելի կերպարները, փորձում աշխարհիկ գրավիչ թեմաներին զուգահեռ քրիստոնյա ընթերցողին հիշեցնել Ահեղ դատաստանի, արթուն ու պատրաստ մնալու խրատները: Կաֆան հեղինակի համար դառնում է նպատակադիր ժանր, որի միջոցով շեշտվում են նաև հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները՝ անհատական-ստեղծագործական դրսևորումները կանոնական տեքստ ներկայացնելիս:

4. Հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները ներկայացնող կարևորագույն բաղադրիչներից մեկը սուրբգրային կանոնը մեկնող խորհրդանշանն է: Հեղինակի՝ խորհրդանշանային ընկալման և վերաիմաստավորման դրսևորումները հաճախ կապվում են նաև

արտատեքստային հանգամանքներով: Վաղմիջնադարյան քնարերգության մեջ սուրբգրային խորհրդանշանային համակարգը անխախտ դրսևորվել է շարականներում, ապա գանձարանային միավորներում: Հեղինակները հստակորեն ներկայացրել են այդ խորհրդանշանները՝ որոշ դեպքերում ներառելով նաև նշանի ընկալման անհատական մոտեցումը: Ուշմիջնադարյան քնարերգությունը ժառանգում է վաղմիջնադարյան խորհրդանշանային համակարգը, սակայն հստակ են նշանների ընկալման վերահիմաստավորումները: Սուրբգրային խորհրդանշանների վերահիմաստավորումները զգալի են հատկապես միջնադարյան սիրերգության մեջ:

5. Վաղմիջնադարյան քնարերգության մեջ արտացոլվում է սուրբգրային կանոնի մեկնությամբ տարածված Վարդ-Քրիստոս-Աստվածամայր ընկալումը: Սոխակի սերը վարդի հանդեպ և նրանց բաժանումը, միմյանց չտեսները այլաբանորեն ներկայացվում է հոգու և մարմնի ներհակությամբ, միջնադարյան հոգու և մարմնի հավերժական պայքարի համատեքստում՝ վարդ-մարմին, սոխակ-հոգի զուգահեռով: XVII-XVIII դդ. հայրեններգության մեջ «վարդը» խորհրդանշում է հայրենիքը, սիրերգության մեջ՝ կնոջը: Ուշմիջնադարյան քնարերգուն մեկ տաղում ներկայացնում է իմաստային համանշանակումները՝ նույն խորհրդանշանով գովերգելով և՛ Աստվածամորը, և՛ սիրելիին:

6. Ստեղծագործելու շնորհի՝ լույսի, հայտնության խորհրդանշանային դրսևորումները Վերածննդի շրջանում կապվում են հեղինակային հանրագիտակության, ասվածը փորձով ապացուցելու սկզբունքի հետ: Հովհաննես Սարկավազի ստեղծագործության մեջ, մասնավորաբար «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարիկ» խոհափիլիսոփայական պոեմում գիտելիքի լույսի շնորհական և տրվող բնութագրիչներից հեղինակը առանձնացնում է շնորհականը: Մարդուն շնորհվում է արարելու, ստեղծելու կարողություն, երբ ջանադիր աշխատանքով արժանի է դառնում ստանալու այն: Վերածննդի շրջանում աստվածաճանաչման լույսի և գիտելիքի լույսի տարբերակումները ներկայացվում են նաև խորհրդանշական «գիտելիքի, իմացության աղբյուր» արտահայտություններով, որոնք նույնանում են համաշխարհային գրականության նույն շրջանում տարածված «խմել իմաստություն» ընկալման հետ:

7. Հեղինակային հայեցակարգի բնութագրման կարևոր բաղադրիչներից են բառ-կրկնությունները և նկարագրական-ոճական կրկնությունները, այսինքն՝ կրկնության պոետիկայի կաղապար-մոդուլները: Բանաստեղծական կայուն բառ-կաղապարները հնարավորություն են ստեղծում քննել հեղինակի վերաբերմունք-ընկալումը տվյալ կանոնի ներկայացման կամ թեմայի իրացման համար: Կրկնության պոետիկան

նպաստում է հեղինակային ստեղծագործական-անհատական դիրքորոշման որոշակիացմանը:

8. Կրկնության պոետիկայի բաղադրիչներից է ոճական կրկնությունը, որը ենթադրում է հեղինակի ոճի կրկնության միտումնավոր գործածություն՝ փոխանցելիք գաղափարի նույնական ընկալումը ներկայացնելու համար: Հեղինակային ոճի կրկնությունը արտացոլում է ուշմիջնադարյան հեղինակի վերաբերմունքը կանոնական, իրեն ավանդաբար փոխանցված տեքստի հանդեպ:

9. Վաղմիջնադարյան շրջանի քնարերգուն սուրբգրային կանոնի գեղարվեստական թարգմանն է, մեկնողը և նկարագրողը: XIV-XVI դդ. տաղերգության մեջ ընդգծուն է նույն թեմայի շրջանակում քնարերգուի հակադիր կարծիքների, հակասությունների արտացոլումը: Հեղինակը նույն տաղում զուգահեռում է երևույթի աշխարհիկ և հոգևոր իմաստները, փորձում ներկայացնել իր տեսակետը, իսկ եզրահանգում կատարելիս իր բացահայտած նոր-անորոշի և ավանդաբար փոխանցված մեկնության տարբերակներից ընտրում է վերջինը: «Հեղինակային դիմադրություն» այս երևույթը շատ տարածված է ուշմիջնադարյան քնարերգության մեջ: Երկչերտ, երկպալան մտքերի տիրույթում հեղինակը, այնուամենայնիվ, ընթերցողին փոխանցում է նաև նոր ընկալումը, երևույթների մասին սեփական վերլուծությունների արդյունքում ծնված նոր գաղափարը: Վաղմիջնադարյան քնարերգուի տաղում չկա այս երկչերտ, ներքին հակադրություն պարունակող միտքը: Քնարերգուի վախը, տագնապը, ապաշխարությունը արտացոլում է միայն այդ գաղափարի շուրջ կենտրոնանալը:

10. Միջնադարյան թափառիկ մոտիվների թեմատիկ-նկարագրական ընդհանրություններ կան նաև հայ միջնադարյան քնարերգության մեջ, որոնք ևս արտացոլում են հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները: XII-XIII դդ. հայ և ֆրանսիական միջնադարյան քնարերգության մեջ կանոնընկալման, սիրերգության արտահայտման, նկարագրական բառ-կաղապարների զուգահեռները վկայում են ժանրային ձևավորումների կայուն անցումների, միջնորդավորված ազդեցությունների մասին: Նշյալ դարաշրջանների տրոպադուրների և հայ տաղերգուների (ոչ միայն հոգևոր տաղերի) ներկայացրած սուրբգրային հիմնական թեման վերաբերում է Ահեղ դատաստանին:

11. Հայ միջնադարյան քնարերգության գրեթե բոլոր շրջափուլերում կենսական են մնում սուրբգրային հետևյալ մոտիվները, որոնք քնարերգության մեջ արտացոլվում են հիմնականում խորհրդանշանային ընկալմամբ և խրատաբար փոխանցելու, ուսուցանելու սկզբունքով՝ ադամական մեղք, Քրիստոսի ծնունդ, Մկրտություն, Հարություն, Դավթի սաղմոսներ, Երգ երգոց, Ահեղ դատաստան, հոգու և մարմնի պայքար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ստեփանյան Ա., Կյանքի ու մահվան, հայտնության ու ազատության փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Սարկավազի «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարիկ» խոհա-փիլիսոփայական պոեմում, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», թիվ Գ, Երևան, 2020, էջ 109-122:
2. Ստեփանյան Ա., Վարդի և սոխակի մոտիվի ուշմիջնադարյան խորհրդանշանային ընկալումները, «Հայագիտական հանդես», թիվ 2 (47), Երևան, 2020, էջ 96-103:
3. Ստեփանյան Ա., Հեղինակի խնդիրը հայ միջնադարյան օրհներգության մեջ, «Հայագիտության հարցեր», թիվ 2 (23), Երևան, 2021, էջ 128-138:
4. Ստեփանյան Ա., Ստեղծագործելու շնորհի անհատական և կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ, «Հայագիտական հանդես», թիվ 4 (53), Երևան, 2021, էջ 76-88:
5. Ստեփանյան Ա., Հեղինակի ստեղծագործական դիրքորոշումը հայ միջնադարյան կաֆաներում, «Գրականագիտական հանդես», թիվ ԻԳ, Երևան, 2021, էջ 3-13:
6. Ստեփանյան Ա., Խորհրդանշանի ընկալման և վերաիմաստավորման դրսևորումները ուշմիջնադարյան հայ քնարերգության մեջ, «Հայագիտության հարցեր», թիվ 3 (24), Երևան, 2021, էջ 120-138:
7. Ստեփանյան Ա., Սուրբգրային կանոնի կիրառումը հայ միջնադարյան կաֆաներում, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», թիվ Զ, Երևան, 2021, էջ 57-68:

Анна Вардановна Степанян

Авторская концепция и библейский канон в армянской средневековой лирике

РЕЗЮМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01- «Армянская средневековая и новая литература»

Защита диссертации состоится 07.07.2022 г., в 12:00, на заседании Профессионального совета по литературе 012 ВКК РА, действующего в ЕГУ.

Адрес: г. Ереван, 0025, ул. Абовяна 52/а, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 202.

Работа включает исследование авторской канонизации печатных текстов армянской средневековой лирики V-XVIII вв. Работа состоит из введения, четырех глав, заключения, списка литературы.

В рамках темы предпринята попытка отдельно рассмотреть индивидуально-творчески-предметную установку средневекового лирика. Работа представляет собой попытку дать комплексное представление о роли автора средневековой лирики.

В диссертации отражен системный характер армянской средневековой лирики.

Во введении сформулированы предмет диссертации, цель и задачи, обоснована актуальность темы, излагаются методы исследования и научная новизна, дается теория источников и литературы, связанных с темой.

Глава первая: "Проблема автора в средневековом религиозном гимне Армении". Представлены индивидуально-творческие проявления автора в выражении и интерпретации библейского канона армянскими средневековыми гимнами, проявления личности и "Я" автора в гимнических единицах «Вогормея», а также в тематических включениях гимнов, в описаниях авторских чувств и переживаний крупнейших представителей данной исторической эпохи. Большое значение дано выделению песенно-поэмной природы гимна, так как выражение хвалебной поэмы стиха через

песню показывает намерение автора быстро «донести» правило до верующего, сделать его истолкованным или наставить. Обстоятельство подвижности и театральности заметно в гимнах, созданных в эпоху Возрождения. В гимнах, затрагивающих историческую тематику, значительны своеобразные переплетения времени, прожитом автором, и времени описания, когда автор пытается учить читателя, материализовывая примеры хвалебных персонажей. Особенно значимо «присутствие» автора в апокрифических гимнах. В этом случае автор свободно выражает свои чувства, взгляды, отношение к евангельским персонажам.

Глава вторая: "Применение библейского канона в армянских средневековых кафях". Представлены мотивы индивидуально-творческих позиций автора, мотивы выбора библейского канона, представляя их параллельно с прозаическими рассказами. Особенно в кафях об истории Александра Македонского становятся заметными тенденции автора каф представить библейский канон, выразить и наставить параллели между характерами Александра Македонского и Христа. Индивидуально-творческая позиция автора преобладает как в философских, так и в отражающих народное мышление кафях.

Глава третья: "Проявления восприятия и реинтерпретации библейского символа в позднесредневековой армянской лирике". В третьей главе представлены идентичные проявления библейского символа в позднесредневековой лирике, а также переосмысления этого символа, изменения в символического восприятия автора. Неизменное использование библейских символов, а также их использование с новыми восприятиями в позднем средневековье были параллельны влияниям, оставленным фольклорным мышлением, были представлены символические интерпретации народного мышления и влияния, которые несли авторы позднего периода.

Глава четвертая: "Поэтика повторения и проблема "авторского сопротивления" в армянской средневековой лирике". Представлены два компонента, формирующих авторскую концепцию: авторские, стилистические повторения, использование словесных шаблонов и феномен «авторского сопротивления», а также в параллелях отражены тематико-описательные общности в армянской и провансальской лирике. Рассматривалась также дифференциация стилистических особенностей произведений, следующих народному языковому мышлению, от авторских приписываний. В случае «авторского сопротивления» противоположные смыслы рассказа используются одновременно, что обусловлено

индивидуальным и каноническим восприятием автора. Выделены XII-XIII века, сыгравшие решающую роль, так как в диапазоне творческих влияний, тематико-описательных переходов есть такие поэты, идеологические акценты в творчестве которых были новыми и свежими сказаниями для канонического Средневековья. Любовные, религиозно-канонические, политические темы трубадуров представлены в армянских средневековых айренах, с общими чертами, выраженными в темах песен любви, поклонения, религии.

В заключении приводятся итоги исследования.

Anna Vardan Stepanyan

**The Author's Concept and the Biblical Canon in the Armenian Medieval
Lyrics**

SUMMARY

**Dissertation for the degree of Candidate of Philological Sciences on the
specialization of "Armenian Medieval and New Literature" 10.01.01**

**The defense of the dissertation will be held on July 7, 2022 at 12:00 pm the
session of the Specialized Council 012 on Literary Studies of SQC RA by
the YSU**

**Address: 0025, Yerevan, Abovyan ave. 52a, Building of YSU Faculty of
Armenian Philology, auditorium N 202.**

The work includes the study of the author's canonical perception of the printed texts of the Armenian medieval lyric poetry of the V-XVIII centuries. The work consists of an introduction, four chapters, a conclusion, a list of bibliography.

In the introduction the subject of the dissertation, the goal and the problems are formulated, the relevance of the topic is substantiated, the research methods and the scientific novelty are presented, the theory of sources and literature related to the topic is given. The work is an attempt to give a comprehensive idea of the role of the author of medieval lyrics. The dissertation reflects the systemic nature of the Armenian medieval lyrics.

Chapter one: "The Problem of Author in the Armenian Medieval Hymnody". The author's individual-creative manifestations of the expression and interpretation of the biblical canon of the Armenian medieval hymns, the manifestations of the author's personality and "self" from the hymnal units in "Voghormea" ("Have Mercy"), as well as in the thematic inclusions of the hymns – in the descriptions of the greatest representatives of the given historical epoch, author's experiences are presented. The separation of the nature of the song-poem of the hymn was given importance to, as the expression of the doxological verse poem through the song indicates the author's intention to "deliver" the canon to the believer quickly, to make it interpretable and to admonish. In the hymns that deal with historical themes, there are significant interweavings of the author's time and descriptive time, when the author tries to teach the reader by materializing the examples of glorious characters.

Chapter two: “The Application of the Biblical Canon in the Armenian Medieval Kafas”.

Chapter three: “The Manifestations of the Perception and Reinterpretation of the Biblical Symbol in the Late Medieval Armenian Lyrics”. The third chapter presents the identical manifestations of the biblical symbol in the medieval lyric poetry, as well as the reinterpretations of that symbol, the changes in the author’s symbolic perception. The uses of biblical symbols with unchanging and new perceptions in the Late Medieval period were paralleled also with the influences of folklore mentality, the symbolic interpretations of folk thought and the impact of late authors have been presented.

Chapter four: “The Poetics of Repetition and the Problem of ‘Author’s resistance’ in Armenian Medieval Lyrics”. The two components that shape the author’s concept are presented: the repetitions of the use of the author’s style and word-templates and the phenomenon of “author’s resistance”, as well as the thematic-descriptive commonalities in Armenian and Provençal poetry are reflected in parallel. The differentiation of the stylistic peculiarities of the works following the folk linguomentality from the author’s attributions has also been observed. The love, religious-canonical, political themes of the troubadours are presented in the Armenian medieval “hayrens”, with the commonalities expressed in the themes of love song, official song, religion and confession. In the Conclusion the main outcomes of the research are presented.

